ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԿԱՄԱՎՈՐ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՔՆՆԱԿԱՆ ԹԵՍՏԻ

Ո Ւ Ղ Ե Ց Ո Ւ Յ Ց

ԵՐԵՎԱՆ 2024

Ուղեցույցում ներկայացվում է ուսուցչի ատեստավորման քննության թեստի կառուցվածքը, տրվում են առաջադրանքների կառուցվածքային տեսակների նկարագրությունը, պատասխանի գնահատման չափանիշները և պատասխանների՝ համակարգչում նշման կարգի բացատրություն-ները, առաջադրանքներից բացառվող լեզվական իրողությունները, առաջադրանքների կազմման համար որպես գիտական հիմք ծառայող գրականության ցանկը:

ԹԵՍՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Թեստավորումը անցկացվում է թեստի միջոցով, համակարգչային եղանակով:

Թեստը պարունակում է 25 առաջադրանք, որոնցից հնարավոր է վաստակել առավելագույնը 65 միավոր: Բովանդակային առումով թեստում առկա են լեզվի 4 հիմնական բաժիններից (հնչյունաբանություն, բառագիտություն, ձևաբանություն, շարահյուսություն) և՛ գործնական գիտելիքներ ստուգող առաջադրանքներ, և՛ տեսական պնդումներ: Կառուցվածքային առումով առաջադրանքներն ունեն հետևյալ 2 հիմնական տեսակները՝ ընտրովի պատասխանով և կարճ պատասխանով: Կարճ պատասխանով առաջադրանքները 2 տեսակի են՝

- 1-ին տեսակ.
  առաջադրանքի պահանջին համապատասխանող լեզվական միավորների նշում. ճիշտ պատասխանին (եթե ճիշտ են նշված բոլոր համարները) տրվում է 1 միավոր (ճիշտ պատասխանների քանակը հարցադրման մեջ չի նշվում),
- 2-րդ տեսակ.
  ենթաառաջադրանքներ ունեցող առաջադրանքների դեպքում յուրաքանչյուր ենթաառաջադրանքի պահանջին համապատասխանող լեզվական միավորների համարների գրանցում. ճիշտ պատասխաններին (եթե ճիշտ են նշված տվյալ ենթաառաջադրանքի պահանջին համապատասխանող բոլոր համարները) տրվում է 1-ական միավոր (ճիշտ պատասխանների քանակը հարցադրման մեջ չի նշվում),
- 3-րդ տեսակ.
  տրված 9 լեզվական միավորներից կամ պնդումներից պահանջին համապատասխանում են որևէ 3-ը. դրանցից յուրաքանչյուրի ճիշտ նշման դեպքում միավոր է տրվում. այսպիսով, տվյալ առաջադրանքներից հնարավոր է վաստակել առավելագույնը 3 միավոր:

ԹԵՍՏԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎՈՂ ՆՅՈՒԹԻ ՄԱՍԻՆ

Թեստային առաջադրանքները կազմվում են հանրակրթական դպրոցների ծրագրային նյութի հիման վրա՝ բացառելով ստորև նշվածները.

ուղղագրությունից և ուղղախոսությունից՝

1. ուղղագրական զուգաձևությունները
2. բաղաձայնների և երկհնչյունների արտասանությունը
3. օտար ծագմամբ հասարակ և հատուկ անունների շեշտադրությունը
4. տողադարձը

բառագիտությունից՝

1. մենիմաստ և բազմիմաստ բառերի տարբերակումը
2. նույնարմատ և համահունչ համանունները
3. դիպվածային, կեղծ գրական բառերը, հասարակաբանությունները
4. քարացած ածանցները
5. իսկական և կցական բարդությունների տարբերակումը
6. համառոտագրությունը

ձևաբանությունից՝

1. սեռական հոլովը տրականից (բացի դերանվանական հոլովումից) և հայցականը ուղղականից և տրականից տարբերակումը
2. որակական և հարաբերական ածականների տարբերակումը
3. արգելական հրամայականի զուգաձևությունները
4. երկրորդական բաղադրյալ ժամանակաձևերը
5. վերաբերականների տեսակների տարբերակումը՝ բացի հաստատական, ժխտական, երկբայական, սաստկական, սահմանափակման տեսակներից

շարահյուսությունից՝

1. առդրությունը
2. համասեռ և տարասեռ որոշիչների ճանաչումը, դրանց տարբերակումը և կետադրումը
3. սեռականով որոշչի տարբերակումը հատկացուցչից
4. վերաբերականների տրոհումը՝ բացի հանրահայտ և ակնհայտ դեպքերից
5. կետադրական զուգաձևությունները

ՀԱՄԱԿԱՐԳՉՈՒՄ ՆՇՄԱՆ ԿԱՐԳԸ

Ընտրովի պատասխանով առաջադրանքների դեպքում պետք է նշել ճիշտ պատասխանին համապատասխանող շրջանակը:

Կարճ պատասխանով առաջադրանքների **1-ին տեսակի** դեպքում պետք է նշել ճիշտ պատասխաններին համապատասխանող վանդակները:

Կարճ պատասխանով **2-րդ տեսակի** առաջադրանքների դեպքում յուրաքանչյուր ենթաառաջադրանքի համարի դիմացի վանդակներում պետք է գրել համապատասխան նախադասությունների թվերը՝ առանց բացատների և ստորակետերի:

Կարճ պատասխանով առաջադրանքների **3-րդ տեսակի** դեպքում պետք է նշել ճիշտ պատասխաններին համապատասխանող վանդակները: ***Չի կարելի*** կատարել 3-ից ավելի նշում. ցանկացած 4 և ավելի նշում ունենալու դեպքում առաջադրանքը գնահատվում է 0, եթե անգամ ճիշտ են որևէ 1, 2 կամ 3 նշումներ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Հանրակրթական ուսումնական հաստատությունների համար հայոց լեզվի երաշխավորված և գործող դասագրքեր
2. Բուհերի բանասիրական ֆակուլտետների ուսանողների համար երաշխավորված դասագրքերից՝
   - Ա. Սուքիասյան, Ժամանակակից հայոց լեզու (Հնչյունաբանություն, բառագիտություն, բառակազմություն), Եր., 1989
   - Մ. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզու (Ձևաբանություն), Եր., 2002
   - Ս. Գյուլբուդաղյան, Ժամանակակից հայերենի շարահյուսություն (Պարզ նախադասություն), Եր., 1988
   - Գ. Գարեգինյան, Ժամանակակից հայոց լեզու (Բարդ նախադասություն), Եր., 2002
3. Է. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան (բացառապես իմաստաբանության առումով՝ բառի բացատրություն, հոմանշության կամ հականշության հնարավորություն, համանունություն), Եր., 1976
4. Ա. Սուքիասյան, Ս. Գալստյան, Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Եր., 1975

Ծանոթություն: Գրականության ցանկում չնշված որևէ այլ աղբյուր չի կարող հիմք ծառայել բովանդակային բողոքարկման համար: